Արձանագրություն N 3
<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/10>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 06 մայիսի 2024թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ. Գևորգյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մարտիրոսյան
Լ. Սողոմոնյան

Քարտուղար՝ Լ. Ադամյան

1. <<**ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/10**>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2024թ. մայիսի 06-ին, ժամը 10:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

3. Էլեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է մայիսի 07-ին, ժամը 10:00-ին:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2024թ. մայիսի 08-ին, ժամը 14:30:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/10>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան 08 մայիսի 2024թ.
Ժամը՝ 14:30

5. << **ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/10**>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը Համակարգում սկսվել է, 2024թ. մայիսի 07-ին, ժամը՝ 10:00-ին:

6. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	**Մասնակցի անվանումը**	**Տվյալները**
1	«Բի Լայն» ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Խանջյան 50, հեռ. +374 10 57 88 25
2	«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	ք.Երևան , Աճառյան 33/4, հեռ. +374 11800000
3	«ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Հրաչյա Քոչար փ. 2/1, հեռ. 041221878

7. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի գնման ընդհանուր գինը	Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (ՀՀ դրամ)*					
					«Բի Լայն» ՍՊԸ		«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ		«ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ	
					Գնային առաջարկը		Գնային առաջարկը		Գնային առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	Համակարգչային պլանշետ	հատ	2789	326313000	199700000	239640000	234900000	281880000	252891900	303470280

***Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը**

8. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում «Բի Լայն» ՍՊԸ -ն:

9. Հանձնաժողովը որոշեց առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/10>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

14 մայիսի 2024թ.

Ժամը՝ 14:30

10. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ուղարկված հայտը Համակարգում կցվել և ներկայացվել է պատշաճ, սակայն ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

- չի հստակեցվել Համակարգչային պլանշետի մոդելը, ինչպես նաև տեխնիկական բնութագրում չի հանվել առնվազն, նվազագույնը, ոչ պակաս և ոչ ավել բառերը, պաշտպանիչ բառից հետո չի գրվել «պատյանը» բառը:

11. Հանձնաժողովը որոշեց 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Բի Լայն» ՍՊԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

12. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2024թ. մայիսի 16-ին, ժամը 11:00, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 615 աշխատասենյակում:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/10>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

16 մայիսի 2024թ.

Ժամը՝ 11:00

13. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «Բի Լայն» ՍՊԸ -ի կողմից համակարգում կից ֆայլով ներկայացվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նոր շտկված նկարագիր, ուստի հանձնաժողովն որոշեց շարունակել գնահատման աշխատանքները:

14. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2024թ. մայիսի 20-ին, ժամը 16:00, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 615 աշխատասենյակում:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/10>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

20 մայիսի 2024թ.
ժամը՝ 16:00

15. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «Բի Լայն» ՍՊԸ -ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նոր շտկված նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

16. Ներկայացված հայտերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<**ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/10**>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց **ընտրված մասնակից** ճանաչել «Բի Լայն» ՍՊԸ-ին, և **մերժել** «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի և «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

17. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

18. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Գևորգյան

Հանձնաժողովի անդամներ՝

_____ Ա. Մարտիրոսյան

_____ Լ. Սողոմոնյան

Քարտուղար՝ _____ Լ. Ադամյան